

ԲԱՃԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիստիոյ համար
Տարեկան 10 Պր.
վեցամսեայ 5 »
Արտատան հանի հա-
մար տարեկան 12 »
վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻՆՆ ԿՆՆՆԵԼԻ
—)(—
Գրութեան 15 յեկ արտ.
—)(—
Պատկերանոց 2) ամս-
քիս և ևրեկն առ ի ամ-
գամներու համար 20 Օլո
գինյ կրնայ :


ՇԱՐՓՈՒՄ

B. P. Kalémkarian
(Autriche) Mehltharstangasse W. 4
Vienna

Յումակ և գրակ գրկն
և արտոնու և սուցնիկն

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՓՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукиясовъ.

ՃՈՂՈՎԻՆ ԱՈՒԹԻՒ

—)(—

Այժմ կը տեսնենք թէ շափա-
զանց յոյսեր դրած ենք եղեր
պատուելիներու Ռուսչուքի ժողո-
վին վրայ, մոռցած ըլլալով թէ
անոնք ալ ամէն բանէ առաջ ե-
կեղեցականներ են և հետեւա-
բար տան և ինը դարերու հնու-
թիւնը բուրոյզ գաղափարներու
ենթակայ :

Մենք, ազգային մարմիններու
հետ անկեղծ գործակցութիւն մը
երազած էինք. գործակցութիւն՝
բոլորովին անկաշկանդ կրօնական
նկատումներէ և ազգային բանա-
ւոր զարգացման մը հիմերուն
վրայ հաստատուած : Մինչդեռ
ժողովը, հայ հասարակութեան
օգտակար ըլլալու նպատակով
գումարուած ժողովը, իր պաշ-
տօնը խղճի մտօք աւարտած նկա-
տեր է, զուտ բողոքական բրորա-
կանդի համար քանի մը նոր մի-
ջոցներ ձեռք առնելով, և այդ
զլխաւոր աշխատութեանն աւել-
ցած ժամանակը յատկացուցեր
է, ժողովին մէջ և ժողովէն
գուրս, հայ երիտասարդութիւնը
չուայտ հուշակելու, մամուլը պա-
խարակելու, յեղափոխութիւնը
հարուածելու և հայ ժողովրդին
ճակտին «ապերախտ» մակդիրը
փակցնելու, իր «բարերարներ»ը
քննադատելուն համար :

Բարերար... Բայց մարդ-
վերջին շոգեհաւով տարբեր աշ-
խարհէ մը եկած ըլլալու է «հայ»
և «բարերար» անունները իրար
զուգորդելու համար : Ո՛րք, ե՛րբ
տեղի ունեցեր են այդ բարե-
գործութիւնները : Անշուշտ չա-
փազանց անհամեստութիւն եղած
կըլլար բարեգործութիւն հուշա-
կելու վերջին ատեններս հոն հոս
ցրուած քանի մը նուաստացուցիչ
ողորմութիւնները : Ո՛վ չի գիտեր
թէ հայ ազգը իր ծագումէն ի վեր
գործ ունեցած է միշտ մարդաս-
պաններու և յափշտակիչներու
հետ, որոնք պատմական ամօթալի
ընկերակցութիւն մը կաղմած են
անոր շուրջը և ամէն մէկը իր
ընդունակութեան սահմանին մէջ
գործելով, բռնութեամբ, սրով

կամ խօսքով յափշտակած են և
կը յափշտակեն որը Հայրենիքը,
որը ինչքը ու պատիւը, միւսը
դպրոցը ու լեզուն և ուրիշներ...
կրօնքը :

Ասոնք են բարեգործութիւն-
ները որոնց համար հայ ժողո-
վուրդը երախտապարտ պէտք է
ըլլայ...
Գալով յեղափոխութեան և մամու-
լայ խնդիրներուն, ներքին թող
ըլլայ մեզ անձեռնհաս հուշակելու
պատուելիները ու է վճիռ ար-
ձակելու. նոյնպէս մեր գաւակ-
ները դատախարակելու լուսադոյն
կերպի մասին ալ, մանաւանդ երբ
ան՝ միայն կրօնքով կը սկսի ու
կը վերջանայ :

Ձեր ժողովէն մեր ակնկալածը
այդ չէր. և մեր ակնկալութիւն-
ները միշտ յուսախարութեան
պիտի յանգին որքան ատեն որ
ժամանակը և դարերը որոշել չի
գիտնար : Միայն Գործք Առա-
քելոյցի և Աւետարանի դար չէ
ասիկա. այդ չէ որ կը պակտի
մեզ : Գիտութեան, հնարամտու-
թեան, կուսի և ղէնքի ալ դար
է. ասոնք կը պակտին ժողովըր-
դին, ասոնք տանք անոր : Այսօր,
ամենէն ջերմ աւետարանական-
ներն իսկ, Անգլիոյ ծերունազարդ
թագուհիէն և Վիլհելմի սկսեալ
մինչև յիտին հովիւր, գործնա-
կան կեանքի մէջ կուտ մը չեն
տար Աւետարանի արդարեւ վսեմ
սկզբունքներուն. ցաւալի է, բայց
այս այսպէս է. և այս կոկորդի-
լոսներու աշխարհին մէջ, ուր
մեր մարիկը լացուցած են, կու-
ղէք որ զեռ միւս երեսին՝ ալ
մատուցանենք ապտակուելու.
երկրորդ չապիկին՝ ալ տանք.
և երբ աշխարհ ստանայ է՝ մենք
համակերպող, թոյլ և հանդերձ-
եալ կեանքի երանութիւններուն
սպասող տխմարնե՞ր ըլլանք...

Ի՞նչ ալ գիտէք թէ տղայական
կըլլար. բայց ձեր գործը այդ-
պէս կը պահանջէ (ս ուղիտեւ
չահու ալ դար է ասիկա) : Ձենք
մեղադրեր. բայց եթէ չէք ու-
զեր մեզ հետ գալ հոն՝ դէպ ի
ուրամբողջ հայութիւնը կը ձգտի,
աշխարհային լուսադոյն կեանքի
մը, մարդավայել գերբի մը ազ-

դերու շարքին մէջ, թողէք որ
երկուքս ալ մեր ուրոյն ճամբա-
ները շարունակենք. մենք Հա-
յաստան երթանք, դուք... ար-
քայութիւն գացէք :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱՒԻՐ

ԻՆՔՆԱՍՊԱՇՏՄԱՆՈՒԹԻՒՆ

—)(—

Ուրֆայի մէջ յեղափոխական ամե-
նափոքը գէպք մը անգամ չէր պա-
տահած, բայց այս արդարացում մը
չնղաւ իրեն համար համաճարակ կո-
տորածէն ազատելու : Տեղական հայ
ժողովուրդը ղէնքերը յանձնելէ առաջ
կրցաւ արիարար պաշտպանուիլ եւ
երբ կառավարութիւնը կրկին փոր-
ձով հասկցաւ որ շատ սուղի պիտի
նստէր բացարձակ յարձակում մը,
պաշտօնապէս յայտնեց թէ ուրիշ տե-
ղեր պատահած աղէտներէն խուսա-
փելու համար Ուրֆայի կառավարու-
թիւնը ամէն զոռուութիւն ձեռք ա-
ռած է. բայց հարկ անհրաժեշտ է
նսեւ որ հայերը ղէնքերին յանձ-
նեն, հակառակ պարագային իրրեւ-
տպասածը զինուորական զօրութեամբ
պիտի ոչնչացունին : Հայ հասարակու-
թիւնը դաւը գուշակելով ընդդիմա-
ցաւ. բայց ան միջամտեցին խոհեմ
ազգասէրները, որոնք հազար ու մէկ
անտի քարոզներով համոզեցին ժո-
ղովուրդը թէ այնպիսի ատեն մը,
կրբ սաճկութիւնը դրպուած էր՝ մեծ
անխոհեմութիւն պիտի ըլլար հայե-
րու կողմէ ու է պատրուակ տալ :
Սակայն անմիջապէս 10,000 հայերու
եղերական ջարդը ցոյց տուաւ թէ
այդ կարգի խոհեմութիւնները ո՛ր
ատիճան կը գորէին կառավարու-
թեան վճռական ծրագիրը փոխե-
լու :

Մինչդեռ ժամ մը անդին կարմունջ
հայրենակ զիւղը հակառակ կառա-
վարութեան ամէն սպառնալիքին՝
մերժեց գինաթափ ըլլալ, պատնէշներ
կանգնեց եւ հազարաւոր համիտիչ-
ներուն փառաւոր դիմադրութեանէ մը
յետոյ ցարդ անվթար կը մնայ :

Տրպիզոնի ջարդին մասնակից
թուրք հարիւրապետ մը, որուն ու-
ղեկցելու պատենութիւնը ունեցանք
քանի մը ամիս առաջ՝ կը պատմէր
հետեւեալ դէպքը :

Պարդին ատեն շրջակայքը աւերող
լազերու վայրագութիւններէն ազա-
տելու համար՝ քաղաքին մօտակայ
հայ գիւղի մը բնակիչները մեթաւոր
անտառ մը կապաստանին եւ իրենց
ունեցած քանի մը ղէնքերու շնոր-
հիւ կը յաջողին պաշտպանուիլ հոն :
Կոտորածէն ետքը կառավարութեան
կողմէ հարիւրապետը կը ղրկուի զօր-

քով փախտականները տեղերին վե-
րադարձելու : Երկար բանակցու-
թենէ յետոյ հարիւրապետը կապա-
նովացնէ թշուառ գիւղացիները. բայց
գիւղ վերադառնալուուն պէս, կու-
սակալի հրահանգին համեմատ ղէն-
քերը կը ժողվէ ու տասնեակ երիտա-
սարդներ ձերբակալելով իբր ալըս-
տամբ բանտ կը ղրկէ :

Մինասեան յեղափոխական ասպա-
տակախուժը մը կրցաւ Չարչամպայի
ամբողջ գաւառը պահպանել կոտո-
րածէ ու թալանէ. ի դերեւ հանելով
կառավարութեան բոլոր մեքենայու-
թիւնները :

Այս բոլոր դէպքերը կապացուցա-
նեն որ ինքնապաշտպանութիւնը յա-
ջողեցաւ հոն, ուր յեղափոխական
կանխապատրաստութիւն կար եւ
ընդհակառակը՝ ժողովուրդը ոչխարի
նման մորթուեցաւ ու մեծագոյն կո-
րուսաը տուաւ ուր որ յեղափոխա-
կանի ձայնն իսկ չէր լսուած ու աս-
պարէզը «խոհեմներ»ուն էր : Եւ այդ
խոհեմներու վոնմակը կը ստուարանայ
այսօր գասալիք յեղափոխականնե-
րով, որոնք կը պրտան «հայ ժողո-
վուրդը ամէն տեղ քաջ համոզուելու
է որ այդ յեղափոխական կոչուած-
ները ժողովուրդը կոտորածի առաջ-
նորդելէ զատ ուրիշ բան չեն կրնար
ընել» :

Թուրք կառավարութիւնը մեր ինք-
նապաշտպանութեան ջանքերը «ա-
պրտամբութիւն» որակեց եւ սա-
կայն թրքահայաստանի պէս միջա-
վայրի մը մէջ աւելի օրինաւոր մի-
ջոցներով կարելի չէր ինքնապաշտ-
պանուիլ : Իր վաղուց ծրագրած ան-
լուր խժոժութիւնները արդարացնե-
լու համար թուրքը քառութեան նո-
խազ ընտրեց հայ յեղափոխականը
եւ այսօր մեր «խոհեմ ազգասէրները»
կը ձայնակցին իրեն. «Այս բոլոր
գժբախտութիւնները կովկասի հայոց
ձեռներէցութեան հետեւանքն են» :

Մեր ամենահամեստ պահանջները
թուրք կառավարութեանն անլսելի
մնացին, իսկ երբ մարդկութեան
խղճին, քաղաքակիրթ աշխարհի դա-
տաստանին ներկայացուցինք մեր
արդար դատը՝ իբր ապտամբ մեր
արեան ծովին մէջ ուղեց խեղդել մեզ
ու վերջապէս մեր թշնամին իր ըն-
թացքով բացարձակապէս հասկցուց.
«Ձե՛մ ընդունիլ երբեք որ մարդկա-
յին իրաւունքի խօսքը ընէք. ան-
դառնալի կերպով վճռած եմ քննչինջ
ընել ձեզ՝ իրրեւ պիղծ անասուններ :
Թնդանութիւնը ոտմըները ու զի-
նուորներուն սուրինները ձեզի կը
հասնին՝ եթէ ինքնապաշտպանու-
թեան շարժում մը ընէք : Պէտք է
անասնական հլութեամբ սոկաք իմ
հայաջինջ ծրագրիս՝ գործադրութեան

Եւ զոճարանական մաղթանքներով փառաւորէք Մարգարէի յաջորդին ունունը՝ մինչեւ ի սպառ վերնայ աշխարհէս ձեր պիղծ գոյութիւնը :

Եւ մեր «դիւանագէտ հայրենասէրներն ալ մի եւ նոյնը կը կրկնեն կակեղուցիչ կատակի մը ձեւով . «ինքնապաշտպանութիւնը պէտք է ըլլայ հայութեան ծրագիրը, բայց զայն գործադրելու ջանքերէն զգուշանալը որ Մուլթանը չզայրանայ» :

Ու մտածել թէ այս անհեթեթութիւնները՝ նոյն իսկ պարագայում ինչ գրչէն ելած՝ կը ներկայացունեն զեռ «յեղափոխական» անունը կրող կուսակցութեան մը օրկանին մէջ՝ իբրեւ թուաբանական ճշգրտութիւններ

քո անուշ կաթը, ուր սիրելի եմ ես եւ սիրուէիս, տխուր ժպիտը երեսին, սիրաս է խրել իր սիրուն աշխարհ վշտալի նալածքը :

—Դէ, անուշ մայրիկս, միտս բարով, ներքի, արդէն հրացանը ուսիս եմ գցել, գնում եմ անդու թշնամու գէյմ, գնում եմ գերի եղբայրներս, քոյրերիս եւ ձեր պատեր սրով ու գնտակով պաշտպանելու . . .

Բայց լի իր մայրիկ, երբ շիկացած գնդակները վերժգալով պաննոն մեր գիւղի վրայով ու գիւղի երկաթափողները զուրս վազեն, զու էլ զուրս եկ եւ հարցրու . ո՞ր է սրբիս :

Եթէ քեզ ասեն որ ես ընկել եմ սիրոս գնդակահար, մի լար : Իսկ եթէ գանձեն մարդիկ որ ասեն «սպիրիտ զաւակ» ուշք մի դարցրու, գնա տուն, ջերմօրէն պատմիր ամէն բան մանկահասակ եղբայրներիս, թո՛ղ նրանք ինձ չը մոռանան եւ յիշեն որ իրանց մեծ եղբայրը ընկել է թուրքի զէմ մզած կուռմ, որովհետեւ չէ զիմացել նրա անարգանքին եւ զուրս չէ ծոկ . . .

—Ասա՛ նրանց— թո՛ղ փնտռեն սպիտակ մսիս կտորները ժայռերի վրա, արծիւների րնբում, իսկ սեւացած արիւնս սեւ հողերի մէջ . . .

Թող գտնեն հրացանս ու սուրս եւ, երբ թուրքի հանդիպեն՝ հրացանիս գնդակով սղջունեն, իսկ սրովս նրանց վզովը փարեն . . .

Իսկ եթէ ինքը սիրտ չանես, այն ժամանակ կանչիր գիւղի աղջիկներին եւ իմ հասակակից երկուսս արգանքիս— թո՛ղ պար բռնեն . . .

Թող գայ եւ սիրուէիս իր ընկերուէիներովը երգերով եղբայրներիս պատմելու՝ թէ՛ ես ինչպէս եմ ոչնչացել եւ թէ՛, մահուանս վերջին վայրկեաններում, ինչ խօսքեր եմ ասել իմ խմբին . . .

Գիտեմ, քեզ շատ ծանր կը լինի նայել այդ ուրախ խմբին, բայց ոչ ինչ նայիր, քաջ մայրիկս, ու, երբ քո եւ չքնաղ սիրուհուս նալածքը

ներք իրար հանդիպեն, ինձ սիրող երկու սրակեր իրանց խորքերից կը հատաչեն եւ զտոն արցունքի երկու ծանր կաթիլներ կընկնեն քո ծերցած եւ սիրուհուս թարմ կրծքի վրա . . .

Այդ կը տեսնեն իմ մանկահասակ եղբայրները եւ երբ իմ տարիքին հասնեն՝ կիմանան ինձ պէս սաստիկ ասե՛լ եւ շատ սիրելի . . .

Բայց եթէ, յանկարծ, սղջ վերադառնամ, կարիչ ընկերներով, հրացանները ուսերնիս եւ զրօշակը ձեռքիս, այն ժամանակ, քաջ մայրիկ, հետզ վերցրու նշանած իս, ծաղիկներ քաղեցէք, պսակներ հիւսեցէք հրացաններն իրիս ծայրերի համար, եւ մեզ գիմաւորեցէք : Գու էլ պսակ զեր գլխիդ եւ եկ համբուրիր իմ ճակատս՝ ուր կը լինեն զրօշմած երկուս, հրաչէկ խօսքեր . «Ազատութիւն կամ մահ» . իսկ ես, վերաւոր եւ արեւնոտ թեւովս, կրծքիս կը սեղմեմ սիրուհուս, որ նա զգայ թէ քաջ սիրաւ ինչպէս է բարախում . . .

Նրա լացը կը խեղդեմ կարօտակէզ համբոյրովս, իսկ արցունքը կը սերբեմ շրթունքներս :

Դէ, մայրիկ, միտս բարով, զու էլ սիրուէիս, խումբը շարժվում է, գնում ենք, ճանապարհը դժուար է, բայց փառաւոր . . .

Գուցէ մեռնեմ ծաղիկ հասակում, հող չէ, գոնէ ժողովուրդը կասէ թէ խեղճ զոհվեց ճշմարտութեան եւ ազատութեան համար . . .

Եւ զոճարանական մաղթանքներով փառաւորէք Մարգարէի յաջորդին ունունը՝ մինչեւ ի սպառ վերնայ աշխարհէս ձեր պիղծ գոյութիւնը :

Պարզ է, ուրեմն, որ ազգայնութիւնը լեզուի վրայ էլ չի հիմնուած :

Գ. կրճի . — Որովհետեւ կրօնի առարկան հոգեւոր միութիւն է, ուրեմն մի՞թէ կրօնական հաստատութիւնները նոյնութիւնը ազգայնութեան գիտաւոր նշան չի կարող լինել . չէ՞ որ այդուհեղ գաղափարի, աշխարհայեցողութեան նոյնութիւն կայ :

Անտարակոյս, շատ քիչ կապ կայ, որ իւր հետեւողները մէջ այնքան սերտ կապակցութիւն յառաջանէ եւ ստիպէ նրանց միանալու, որքան կրօնը : Կրօնի ազդեցութիւնը գերակշիռ է եղած, մանաւանդ նախօրոյ գարերում : Հին ժամանակ, ինչպէս եւ մասամբ մեր օրերում Արեւելքի մէջ, քաղաքական եւ կրօնական հաստատութիւնները միացած էին, հետեւաբար կրօնը զուտ ազգային էր եւ պետութեանց սահմաններից չէր զուրս դալիս :

Եւ որովհետեւ կրօնը ընկերային կեանքի բոլոր հիմունքները իր մէջ էր առած, ինչպէս եւ սյով տեղ տեղ Արեւելքում, կրօնական միութիւնը այլապէս տարբերին մէջ ձուլումն, ազգային միութիւն, ընկերային ամբողջութիւն էր յառաջացնում :

Հուովմէական կայսրութիւնը իր աշխարհակալած երկիրներէ մէջ կրօնական աշխարհակալութիւն էլ էր ներարդէն հաստատված էին եւ գոնէ իմ կարծիքով, պարտաւոր էին քաջութեամբ եւ իբր յեղափոխական խօսել թուրքերի հետ . տեսնել մի հայ պատանի որ ամենայն պաշարներով թեւաբար պատասխանեց .

«Սպանեցի որովհետեւ Ազգի թրչնամի եւ դաւաճան մ'էր» . . .

Արմենական խեղճ զուրս տարան Մաքսիմովը եւ Նազիմը մի երկու երեք նախադասութիւններ իրար հետ փոխանակելուց յետոյ՝ յանկարծ նազիմը վրձեց ինձ .

—Մուսիօ Պատրիկոֆ, ճիշդ է որ զուրք վճեղ էիք ինձ սպանել :

—Այո, պատասխանեցի որոյ կերպով եւ ուզիդ աչքերի մէջը նայելով : Նազիմի զեմքը գունատվեց : Նա մի վայրկեան ապշեց, բայց ներկայ եղողները շարեցին եւ մի քանի վայրկեան մեռելային ճնշող լուսութիւնը սիրեց սեւեակում :

Վերջապէս նազիմը բերանը բացեց .

—Բայց ի՞նչու, չէ՞ որ ես դեռ նոր եմ պաշտօնի անցել եւ դեռ հայրիկն ինձ ատելու պարծառ չեմ ասել :

—Գուցէ զուք սանձամբ լաւ մարդ էք, բայց, հէնց պաշտօնի գրելու անցնելու առաջին օրերից, ցոյց տաւ իբր որ աղոյ ոստիկանական նախաւոր էք, ուրեմն մեր գործունէութեան համար վնասակար . մենք ձեզ ուզում էինք սպանել իբրեւ Մուլթանի բարձր պաշտօնեայի եւ իբր ընդունակ նախաւորի . . .

4ԱՐԻԺ (Մեացեալը յաբողոյով)

ՀԱՅՐԴՈՒԿԻ ՀՐԱԺԵՅՏԸ

—)(— (Ազա՛ն փոխադրութիւն իւրիսո Բոսնից)

4ԱՐՈՒ (ԱՐԻՍՏԱԿԷՍ ՋՐԻԱՆՏԻ) ԹԵՄԱՍԱԿԻՆԸ

Մի անձնիկը մայրիկ որ հայրուկ զարձայ եւ ստիպեցի սգան առջնէկ զաւակիդ վրա : Անիծիր վատ թուրքին որ ոտիպում է մեզ՝ ծաղիկ հասակում . տարագիր լինել, զրկվել քաղցր խօսքից, տնից ու տեղից . . .

Գիտեմ, մայրիկ՝ որ ինձ շատ ես սիրում եմ գիտեմ եւ այն որ վաղը Գիտեմք անցնելու գուցէ նրա ալիքներին զո՛հ գնամ . բայց ի՞նչ անեմ մայրիկ, ի՞նչու ինձ ծնեցիր քաջ եւ անսակա՛ն սրտով :

Այդ սիրտը չէ զիմանում, երբ տեսնում եմ թէ ինչպէս զազան թուրքը ոտնակոխ է անում հօրս օճախը . եւ աւերում հայրենիքս . այն երկիրը, ուր տանջվում են սեւ գերութեան մէջ՝ իմ միլիոնաւոր եղբայրներս, ուր ծնվել եմ ես եւ ծծել

4ԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ԹԵՄԱՍԱԿԱՐԱՆԸ (35)

Վերջապէս մի կերպ լուսացրի եւ սեղմված սրտով նորից գնացի հարցաքննութեան :

Այդ օրն էլ բերին ինձ տեսցնել Ն. Բ. ի հետ որի մօտ թաղվել էր Մուրատը եւ ուր մի քանի անգամ նամակ էր տալիս եւ ինձ հետ գնացել Մկրտիչը : Սրան մասնակ էին Արմենական եւ Մկրտիչը, տեղը տեսնելու . այնպէս որ եթէ ես բոլորովին ուրանայի նրան ճանաչելու, ամենեւին օգուտ չը կար : Ընդհակառակը համոզված լինելով որ իմ վկայութիւնը կշիռ կունենար նրա վիճակը շատ թեթեւեղելու, կամ նոյն իսկ բոլորովին ազատելու՝ յայտարարեցի, երբ ինձ հարցրին, այս ճանաչում եմ Ն. Բ. : Բայց ոչ իբր ընկեր այլ միայն այն պատճառով որ Մուրատը նրա մօտ էր ապրում վերջին օրերը :

Մուրատի հետ խօսում էի առանց զրա ներկայութեան եւ համոզված եմ որ սօ Մուրատին ընդունել էր իբր բարեկամ, առանց գիտենալու նրա յեղափոխական լինելը . եւ այնքան լաւ չեմ յիշում պարտին, որ հիմա էլ չեմ կարողանում որոշել թէ իսկապէս սա է Ն . . . Բ . . . թէ մի ուրիշը :

Սակայն Ն . . . անընդունակ լինելով հասկանալու որ ոտով գլխով մատնված մարդը անկարող է բոլորովին ուրանալով իր վիճակը թե-

թեացնել, շարունակեց ուրանալ մինչեւ վերջը . նոյն իսկ Մուրատին իր տանը մէջ պահելը : Այն ինչ եթէ նա ասէր այս, Մուրատը ինձ մօտ էր, եւ, եթէ ես գիտնայի որ յեղափոխական էր, բոլորովին չէի ընդունի ինձ մօտ : Ես միշտ առնից բացակայ էի եւ երբեք ներկայ չեմ եղել սրանց խօսակցութեան, այն ժամանակ նա էլ հէնց յունւարի ներման ժամանակ կարձակվէր :

Գրիգոր Գլըճեանի բանտից ուղարկված նամակը ուղղված էր Մարգար Մոմճեանին, որի բովանդակութիւնը այս էր . մտաւորապէս . «Կատարութեանը ամէն բան իմացիք է . բոլոր ընկերներու անունը գիտէ . նոյն իսկ ոտմբերու մասին հաստատ տեղեկութիւն ունի» : Մոմճեանն էլ Արմենակի . Մամբրէի, Մկրտիչի, չէմ չէմ Բաղդասարի մատնութիւններով արդէն հաստատված յանցաւոր էր, իսկ Գլըճեանի շարաբաստիկ նամակը ամէն բան վերջացրել էր եւ ես այլ եւս աւելորդ համարեցի նրա մասին լռելը . որովհետեւ ոչ մի օգուտ չէի կարող բերել :

Այդ բոլորից յետոյ՝ ինձ մտում էր միայն այնպիսի տակտիկա բռնել, որ կարողանայի վտանգվածների թիւը կարիւրի եղածի չափ սահմանափակել : Գրա համար սրոյցեցի, այն որ կառավարութեան համար յայտնի ճշմարտութիւններ են չը ծածկել, տեղ տեղ ճիշդ խօսել, տեղ տեղ ճիշդ ու սուտը իրար խառնել, իսկ միւս մտացածը բոլորովին ուրանալ :

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԿՂՔՈՒՆԻՔԻ (4) ԵՐԱՍՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Այլաւ-Լուսնային ունի իր մայրենի լեզուն՝ գերմաներէնը, բայց նա իրեն ֆրանսիական ազգայնութեան է յարած համարում եւ այդ՝ գիտակցաբար :

Այդ ընթացքը բռնելով միայն՝ իմ ուրացածները կարող էին կշիռ ունենալ եւ ինձ թվում է որ իմ այդ գիպլոմատութիւնը աղոյվեց, սրովհետեւ շատ ձերբակալվածների գործը մեզ չը միացրին, իսկ շատերին էլ բոլորովին ձեռք չը աւել :

Նոյն օրը բերին եւ փոքրիկ Արմենակին երես երեսի եւ ինձ մօտ հարցրին .

—Ի՞նչպէս եղաւ որ զու իմաչիկի գործի մէջ խառնվեցիր .

—Օր մը, մէկը եկաւ հօրեղբորս (կարծեմ հօրեղբայրն էր) կամացուկ մը ըսաւ . Վ. էֆէնտին պատերից որ այդ գործը անպատճառ եւ շուտով կատարվի . ես ալ հասկցայ . հօրեղբորս հետեւեցի եւ երբ նա զարկաւ ու փախաւ, ես ալ զաշոյնս իմաչիկին կողը խրեցի :

—Բայց զու այդ Վ . . . էֆէնտին կը ճանչնաս :

—Ոչ, չեմ ճանչնար . բայց հասկցած էի թէ ամենէն մեծն էր . եւ ես ալ ուղեցի անոր հրամանը կատարել :

—Բայց ի՞նչու զարկիր իմաչիկ էֆէնտին :

—Անոր համար որ ազգի թշնամի էր եւ դաւաճան մը :

Այդ տեղ չափազանց յուզվեցի, վեր կացայ, համբուրեցի հայ պատանու ճակատը եւ նազիմին ասի : —Տեսնում էք ինչ կարիչ հայ պատանի է : Եւ իսկապէս շատ միտնաբան էր որ այնքան ճնրքակալվածների մէջ, որոնց յանցանքները

արդէն հաստատված էին եւ գոնէ իմ կարծիքով, պարտաւոր էին քաջութեամբ եւ իբր յեղափոխական խօսել թուրքերի հետ . տեսնել մի հայ պատանի որ ամենայն պաշարներով թեւաբար պատասխանեց .

«Սպանեցի որովհետեւ Ազգի թրչնամի եւ դաւաճան մ'էր» . . .

Արմենական խեղճ զուրս տարան Մաքսիմովը եւ Նազիմը մի երկու երեք նախադասութիւններ իրար հետ փոխանակելուց յետոյ՝ յանկարծ նազիմը վրձեց ինձ .

—Մուսիօ Պատրիկոֆ, ճիշդ է որ զուրք վճեղ էիք ինձ սպանել :

—Այո, պատասխանեցի որոյ կերպով եւ ուզիդ աչքերի մէջը նայելով : Նազիմի զեմքը գունատվեց : Նա մի վայրկեան ապշեց, բայց ներկայ եղողները շարեցին եւ մի քանի վայրկեան մեռելային ճնշող լուսութիւնը սիրեց սեւեակում :

Վերջապէս նազիմը բերանը բացեց .

—Բայց ի՞նչու, չէ՞ որ ես դեռ նոր եմ պաշտօնի անցել եւ դեռ հայրիկն ինձ ատելու պարծառ չեմ ասել :

—Գուցէ զուք սանձամբ լաւ մարդ էք, բայց, հէնց պաշտօնի գրելու անցնելու առաջին օրերից, ցոյց տաւ իբր որ աղոյ ոստիկանական նախաւոր էք, ուրեմն մեր գործունէութեան համար վնասակար . մենք ձեզ ուզում էինք սպանել իբրեւ Մուլթանի բարձր պաշտօնեայի եւ իբր ընդունակ նախաւորի . . .

(Շարունակելի)

մուծումը և ստիպում որ անկախ կրօնները տեղի տային իրապետական Հոգևորականությանը...

Յետագայում, պահպանողական պետություններից շատերը այսօր էլ նոյն ուղեգծի մէջն են...

Սակայն քաղաքակրթութիւնը երկար ծանր պայքարից յետոյ, վերջապէս կրօնին իր յատուկ տեղը տուեց...

Որովհետեւ կրօնը այսուհետեւ անձնուր անձատի ներքին համոզմունքի գործ է դարձած...

Քաղաքական իշխանութիւնից բաժանելուց յետոյ, կրօնի սահմանը հետզհետէ սկսեց անկի ու անկի սահմանափակուիլ և մարդկային ընկերական կազմի մէջ իւր նախկին դիրքը կորցնել...

Անկի սահմանը երթալով տեսնում ենք, որ կրօնը, եկեղեցին իւր կորցրած տեղը վերստին ստանալու գիտումով, ամէն ճիգ թափում է միանալ տիրապետող տարրի հետ...

Կասկած անգամ չի կարող լինել, Հաւատամքը ազգայնութեան խնդրի մէջ գործ չունի: Հայաստանեայց եկեղեցին, իբրև արտագրութիւն հայ մտաւոր կեանքի, իւր մէջ բովանդակում է բազմաթիւ հայկական տարրեր, որոնք այսօր միակ կայն են իրենց մայրենի լեզուն, ազգային ասանդութիւնները կորցնող շատ հայերի համար: Ազգային եկեղեցին զեռ միութեան կապ է

շատերի համար: Բայց այդ անուակութիւնը զեռ բաժանան չէ, որպէս զի նա ազգայնութեան սկզբունք համարուի:

Կաթոլիկ, բողոքական հայերը թէև կրօնական համոզումներով տարբեր, բայց նրանք հայութեան գիտակցական անդամներ են և նրա հետ են մի ամբողջութիւն, մի ազգութիւն կազմում: Միւս կողմից, չմտնանք և այն, որ «ազգային եկեղեցին» զեռ շարունակ քարոզում է. «Ձկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»: Այդ եկեղեցին է, որ իւր պաշտօնատեղի ընտրելով միշտ յայտարարում է. «Մտաւոր հնազանդ լինուք տէրանց ձերոց»: Եւ որ ընդ իշխանութեամբ է ի հնազանդութեան կացցէն. — Ուրեմն մի կարգ արտաոսց, պահպանողական սկզբունքներ, որոնք պակի քան փոսնաւոր են քաղաքական կեանքի ձգտող մի ազգի համար, եթէ նա իրեն թոյլ տայ միշտ այդ եկեղեցիով առաջնորդուելու:

Աղբերի առաջգիւնութիւնը եկեղեցական իշխանութեան և կրօնական սկզբունքների սահմանափակուելովն է պայմանաւորում: Կրօնական առաջական սկզբունքները, եկեղեցական պաշտօնատեղիների հակասական մեկնաբանութիւնները ազգայնութեան սկզբունք երբեք չեն կարող լինել, ուր էլ որ լինեն:

Ս. ՍԱՊՍԱՆ-ԳԻՒԼԵԱՆ (Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարիզ, 19 Օգոստ.

Նախարան. — Մշակի թղթակցի գրութիւնը. — Հացի խնդրու վերջին խոսքով թիւնները. — Նոր տարի. — Կարգապահական խնդիր և հայ Ձրան (2). — Յեղափոխականի մը խոստովանանքը. — Նոր առաջնորդն և նրա առաջին գործը. — Հոստի խնդիր:

Սիրելի բարեկամ, վաղուց մտադրել էի գրել Թարիզու անցքերի մասին համառօտ տեղեկութիւններ, դէսից ու դէնից, ծանօթացնել տեղական հայ կեանքը «Նարժում» ընթացիկներին: Կարծում եմ թէ հեռուոր ազգայիններ շատ նուազ տեղեկութիւններ ունին Պարսկաստանի խորքերում ապրող իրանց ազգակիցների մասին, հետեւաբար անօգուտ չի լինի երբեմն խօսել նրանց մասին: Միայն մի պայման եմ առաջարկում, կամենում եմ իմ իսկական ազգանունը դադանի պահել և չի հրատարակել ինձ դէմ հերքումներ իմ յօդուածների առիթով:

Որովհետեւ մի վաճառատնու ծառայող լինելով, իմ ազգանունի յայտնվելուց կարող եմ զիստ զեպրում բնաւ մեղաւոր չէ, որ ե

զարգացած մարդիկ չը լինելով թոյլ չեն տալ, որ ես գրիչ վերցնեմ և քննադատեմ նրանց սխալ արարքները, հակառակ դէպքում հացիցս են զրկելու: Չը հրատարակել ինձ դէմ հերքումներ, որովհետեւ ես ճշմարտութիւններ եմ գրելու, դէպքերը իրենց իսկական գոյնով եմ ներկայացնելու, հետեւաբար անբարեկամ համարում «Նարժում» ի էջերը հերքումներով դրամած տեսնել և նեղութիւն պատճառել ընթացողներին:

Քաղաքիս «Մշակ» պաշտօնական թղթակիցը, որը առաջարկում, մի քիչ թոյլ բերան լինելով ինքնիրան մտնում է, հետեւաբար չէ համարձակում գրել ամեն բացարձակ ճշմարտութիւններ, բնականաբար իրան հացի խնդրին քիստ չը պատճառելու համար: Այս իրաիրատեսն է, քանի որ հայ լրագիրների թղթակիցները անկախ մարդիկ չեն, ուստի ստացող պաշտօնական թղթակիցներ չեն:

Այս ասածս հաստատող մի արխուր փաստ ներկայացնում ընթացողներին: Կ. վերջերս համարձակութիւն էր ունեցել «Մշակ»-ում գրել տեղումս գտնուող Ամերիկացի Միսիսիպիների մի անվայել և անիրաւ ընթացքի մասին, որոնց դպրոցներում յօդուածագիր Պարոնը դաստատութեան պաշտօն էր վարում:

Եղելութիւնը հետեւեալն է: Ամերիկայից բաւական մեծ գումարներ է գալիս բաժանելու համար հայ գաղթականներին և չբաւարնելին: Սակայն Թարիզի պատուական միսիսիպիները այդ գումարի մեծ մասը ծախսել է Ասորիների վրայ, նրանց մէջ պարբերական ատաղ մղելու նպատակով, և շատ փոքր գումար մը յաւկացրել էր հայ գաղթականներին:

Այս սխալ իրողութիւնները «Մշակ» ի էջերում ա. ստորագրութեան տակ լոյս տեսնելիս, միսիսիպիները վշտանում և բարկանում է, այն միսիսիպիները, որ Ամերիկացի ծնվելուն պարձնում է (2), և փոխան այդ գրումքը օրինաւոր փաստերով հերքելու, ստորնանում է վերստին պաշտօնի չը կոչել ա. ին... Եւ հետեւանք լինում է պարոն թղթակցի պաշտօնից զրկուիլը: Եւ կարգի տխուր երեւոյթներ էր պատահում են Ամերիկացիներին մէջ, որչափ առաւել իրաւունք ունինք սպասելու մեր մէջ...:

Թղթակցի պարոնը իրա թոյլ բերնի պատիժն է կրում, պարձնելու արդիւնքն է վայելում: «Մշակ» ի խմբագրութիւնը այս դէպքում բնաւ մեղաւոր չէ, որ ե

յայտնութիւն չէ եղած այդ կողմից, ինչպէս շատ անբարեկեցիկ մարդիկ են անում են, հակառակ լրագրական տակտիկային... ՄԻՐՁՍ.

ՔՐՈՆԻԿ

Պատրիարքական որոշումով որբերու և կարօտեալներու սնտուկէն ամսական հինգ ոսկի պիտի վճարուի Չմշկածագի մէջ մօտերս հաստատելի որբանոցին: Այս 29 որբանոցն է որ Պատրիարքարանի ուղղակի նպաստով կամ պաշտպանութիւնով բացուած է: Ազգային որբանոցներու մէջ կան այժմ 2,000 ի չափ որբ, որոնց ամսական 300 ոսկի կը վճարուի Պատրիարքարանէն: Աւելորդ է ըսել թէ այս հաստատութիւններու մէջ կարեւոր մասը երեւակայական է:

Իոյն սնտուկը 3,000 զրուշի մօտ գումար մը զրկել է Արարկի Տեղապահին, քաղաքին մօտակայ գիւղերուն մէջ փակ մնացած վարժարանները բանալու: Այնթապի մէջ որբանոց մը բացուած է 40 որբերու համար: Տարեկան 240 ոսկի ծախքին 180 Պատրիարքարանը պիտի վճարէ, իսկ մնացեալը հոգաբարձութիւնը պիտի հագայ:

Կաթողիկոսական որոշումով Ամտերիսանի առաջնորդին յանձնուած է Սիպիւրիոյ հայ բնակիչներուն և տարագրեալներուն հոգեւոր մխիթարութեան գործը: Ո՞վ է ըսեր որ Էջմիածինը անգործ կեցած է:

Տիրգրանակերտէն կը գրեն թէ դատական վճարով Լճէի Մակարաէցուց վանքը, զոր ասորի վանականներ կորզել կուզէին, վերջնապէս ճանչցուել է իբր հայկական տացուածք:

Տիկին Սիրանոյշ և Տիկին Հրաչեայ հանրաժանութ գերանանուհիները Պոլսէն կովկաս մեկներ են իրենց տաղանդով նոր կեանք տալու հայ թատրոնին:

Վարտէմար և Լէման պիտնականներէն զատ ուրիշ գերմանացի բրոքէրստ մըն առա Պ. Ռոհրբախ, որ վերջերս Էջմիածին կը գտնուէր, ուղևորութիւն պիտի կատարէ Վան, Մուշ, Բաղէշ և Հայաստանի գրեթէ բոլոր կարևոր քաղաքներուն մէջ: Ընդհանրական գաղթավայրի մը վերածելու նպատակը, ներքին չէ կասկածել թէ որոշ չափով առջնջութիւն մը գոյութիւն ունի կայսեր ծրագրերուն և այս... զիտական հետազօտութեանց մէջ տեղ:

Կըսուի թէ ռուս կառավարութիւնը մտադիր է ներգալստան մէջ վերաբանալ Թիֆլիսի հայոց քանի մը եկեղեցական ծխական դպրոցները: Պիտի բացուին Յովնանեան, Գայիանեան, Թանդոյեան դպրոցները, որոնք նիւթա

պէս ապահովուած են : Դասա-
տուները պիտի նշանակուին կա-
ռավարութեան կողմէն . դպրոց-
ները ուսական են . ուրսիւնա-
լու բան չկայ :

— 4. Պոլսէն ուսական թերթի
մը կը գրեն թէ Երևալ-Քէօշկի
մէջ վճռեր են մայրաքաղաքին
մէջ ապրող բոլոր հայերը ցու-
ցագրել և այս նպատակով հրա-
ման տրուել է որ հայերը որոշ-
եալ օրերու մէջ ոտտիկանութիւն
երթան թուրք զինուորներու ու-
ղեկցութիւնով : Այս միջոցը ձեռք
առնուելու է այն պատճառով որ
իմացուել է թէ հայ յեղափոխա-
կան մը Լոնտոնէն Պոլիս անցեր
է եղեր : Սին կասկածով մը ամ-
բողջ քաղաքի մը հայ տարրը
տակն ու վրայ ընելը թուրք կա-
ռավարութեան բարբերուն մէջ
նորութիւն չէ :

— Անցեալ ուսումնական տարւոյ
ընթացքին մէջ Պերլինի համալ-
սարանին հայ ուսանողներուն
թիւը եղած է 26, որոնցմէ 3ը
թուրքահայ, մէկը պարսկահայ
և մնացեալները ուսահայ են :

— Ֆիլիպպի նորահաստա հայ-
կական ընթերցարանի վարչու-
թիւնը կիմացնէ մեզ թէ պիտու-
ճէի ներկայ անձկութիւնը չնե-
րելով ամէն անմիջական զոհո-
ղութիւն մէկէն կատարել,
չնորհակալութեամբ պիտի ըն-
դունի այն բոլոր նուէրները,
գիրք, թերթ և այլն, զորս ազ-
գայինները յօժարին զրկել ըն-
կերութեան թանգարանին ճո-
խացման համար :

Ձեռնպէս կը հրաւիրենք հա-
սարկութիւնը չվարանիլ քա-
ջալերելու այս նոր ընկերութիւնը
որ տեղոյն հայերուն մէջ ըն-
թերցումներով, լսարանով, գի-
շերային դպրոցով և մարմնա-
մարզով զարգացում առաջ բերե-
լու նպատակով ճամբայ ելած է :

Գիշերային դասերը արդէն
սկսած են և տեղի կունենան ա-
մէն գիշեր ժամը 8էն 11 ընթեր-
ցարանին մէջ :

— Ձանքեր կըլլան Պոլսոյ կեդ-
րոնական վարժարանը հետզհե-
տէ բարեկարգելու : Այս տարի
Գ. դասարան մըն ալ պիտի ու-
նենայ :

— «Մասիս» բարեկամաբար կը
հրաւիրէ Ձարէն Տիւլպէր և Պատ-
րիկ Կիւլպէնկեան էֆէնտիները,
որ իրենց բարի համբաւին սի-
րոյն համար, փութան հրաժա-
րիլ «հանրային խղճմտանքը կո-
խտող կարգադրութեան մը հե-
տեւանքով փճացուցուած կտակին
տեղ որբանոց մը շինելու դոր-
ծին համար կազմուած յանձնա-
ժողովին անդամակցութենէն» :

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Կ Ր Է Տ Է

Ռրվանձ զրահաւորին մէջն է
որ անգլիացի ծովակալ Նօէլ Էթ-
հէմ փաշաի հաղորդեց եւրոպեան

նոր պահանջները Կրէտէի հան-
գարանցուցման համար : Այս ըն-
թերցումով, ծովակալը թուելէ
ետքը տէրութիւններու սխալ-
ները, և գործուած շարդե-
րուն քաղաքավարօրէն մեղսակից
հուշակելէ ետքը թուրք իշխա-
նութիւնները, կը հրաւիրէր Էթ-
հէմը իր ուժերով պիտութեան
նեղ ապստամբները, յանցաւոր-
ները անգլիական իշխանութեանց
(որոնք առաջարկած են որ իրենց
յանձնուի Կրէտէն բարեկարգելու
գործը) յանձնել յանցաւորները,
փլցնել բոլոր այն տուները ուս-
կէց որ կրակ ըրած էին անգլիա-
կան զինուորներու և քրիստոն-
եայներու վրայ, և ամբողջ ամ-
բողջները յանձնել : Այս բոլորը
նոր ուժակոծման մը սպառնալի-
քով, 48 ժամուան մէջ գործադ-
րելի է Դուռը ընդունած է այս
պայմանները և անոնց գործա-
դրութիւնը հրամայած : Տուները
սկսուած են քանդուիլ, յանցա-
ւորները ծովակալ Նօէլին յանձ-
նուած են, իսկ պաշտպանները
զինաթափ կըլլուին :

Մովակալները կը շարունակեն
խնդրել իրենց կառավարութիւն-
ներէն որ արմատական միջոցներ
ձեռք առնեն :

Կը կարծուի թէ հետեւեալ
ծրագիրը պիտի գործադրուի .
1. եւրոպեան զօրութիւնը զգա-
լապէս աւելցնել . 2. բոլոր միւս-
լիւմաններու զէնքերը առնել .
3. մէջ մէկ եւրոպացի զինուոր-
կան կառավարիչ կարգել երեք
գլխաւոր քաղաքներու մէջ և
պաշարման վիճակի ենթարկել
զանոնք :

ԷԼԻՉԱՊԷԹ ԿԻՍՏՐՈՒՆԻՆ

Անցած կիրակի անբաղդատելի
չքով տեղի ունեցաւ Վիէննայի
մէջ տարաբախտ կայսրուհիին
յուզարկաւորութիւնը : Արդէն
ժընէվէն մինչև և ասորիական
ոտանը ցաւակցական ընդհանուր
ցոյց մըն էր որ կողմնէր ամէն
տեղ կայսրուհիին դազադը :
Վիէննա քաղաքը սուգի և թաղ-
ժութեան անհուն ուղկէան մը կը
ներկայացնէր : Մարմինը փո-
խադրուեցաւ արքունեաց դահ-
լիճը ուր կը գտնուէին պետու-
թեան ամենաբարձր պաշտօնա-
տարները : Իրիկուան ժամը
10ին պատկառազգեցիկ թափորը
Պուրկի մատուռը ուղղուեցաւ ուր
կը գտնուէր վշաակիր կայսրը որ
յետոյ Եէօնպոլսի պալատը դար-
ձաւ :

Յետոյ մարմինը ամփոփուեցաւ
Քաբլուսինեան եկեղեցիին գամ-
բարանը հանդիսաւոր արարողու-
թիւններով որոնց ներկայ էին
բազմաթիւ վեհապետներ և ամ-
բողջ կառավարութիւններու ներ-
կայացուցիչները :

— Լուչէնի բնաւ զղջացած չէ
ըրածէն, շատ ուրախ է որ գործը
յաջողութեամբ զլուխ հանած է :
Գանդատեր է հարցաքննիչ դա-

տաւորին որ խոստացուած գլա-
նիկները չեն տրուած իրեն :
Ձուրցերիական կառավարութիւ-
նը որ բաւական պղտիկ մնացած
է այս գործին մէջ, բաղմաթիւ
կասկածելի անձեր ձերբակալած
է իրրեւ անիշխանականներ :
Կառավարութիւնները շատ ան-
հանգիստ են անիշխանականնե-
րու վախէն : Կրտսի թէ Իտալիոյ
դահաժառանգին վրայ սպանու-
թեան փորձ մը եղեր է, կայսրու-
հիին յուզարկաւորութեան հա-
մար Վիէննա դացած ատեն : Ի-
տալիա, իրրեւ ամենէն կատաղի
անիշխանականները արտադրող
երկիրը, միջազգային համաժո-
ղով մը առաջարկը ըրած է,
անիշխանականութեան դէմ մի-
ջոցներ ձեռք առնելու համար :

Տ Ր Է Յ Թ Ի Ի Ս

Այս խնդիրը երբեք այսպան
սուր հանգամանք մը ստացած
չէր : Այս պահուս ամբողջ Ֆրան-
սան կառավարութիւնն ալ մէջը
հաշուելով, երկուքի բաժնուած
է . մէկ կողմը դատին վերաբըն-
նութիւնը կը պահանջէ, միւս
կողմը հակառակ է այդ գաղա-
փարին : Արդէն խնդիրը նախա-
բարական տաղնապի մը յանդած
է : Բալէնեաքի պէս, իր յա-
ջորդն ալ Չիւրլիխտէն զօրավարը
հիմնապէս հակառակ է վերաբըն-
նութեան՝ հրաժարած է, իրեն
հետ քաշելով նաեւ հանրօգուս
չինութեանց նախարար Պ. Թի-
լէյը : Ասոնց տեղ ընտրուած են
զօրավար Շանուան պատերազմա-
կան և Պ. Կոտէն հանր. շինու-
թեանց նախարար : Չիւրլիխտէն
հրաժարած ատեն յայտներ է թէ
Պ. Ֆէլիքս Թարն ալ պիտի հրա-
ժարի ի թէ վերաբըննութիւնը ան-
հրաժեշտ դառնայ : Պահանջող-
ներ կան որ խնդիրը երեսփո-
խանութեան որոշման ենթար-
կուի, ինչ որ անխոհմութիւն
կըլլար մաքբու այս զրգուած
վիճակին մէջ : Այժմ, արդա-
րութեան նախարար Պ. Սարլէնի
առաջարկութեամբ, խնդիրը քն-
նելու համար յատուկ յանձնա-
ժողով մը ընտրուած է, որ այսօր
ինիստ պիտի գումարուի : Չօլա
հօկտ. 3ին Բարիզ կը վերադառ-
նայ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թաւրիզէն կը գրեն թէ պարս-
կաստանի գրէթէ ամէն կողմից
տարածայնութիւն մը կը շրջի թէ
Թէհրանի մէջ Շահը սպանելու
փորձ մը եղեր է : Պալատին մէջ,
նոյն իսկ Ն. Վեհափառութեան
նշխաններէն պահուած անծա-
նօթ մը գտնուել է որ բէվօլվէ-
րով մը զինուած է եղեր : Կը կար-
ծուի թէ մարդասպանը, մեղսա-
կիցն ըլլայ նախորդ Շահին
սպանիչ Միրզա Բիզաի :

— Մուրադիէվի առաջարկին
Դուռը պատասխանած է թէ վեր-
ջին պատերազմին հետեւանքով

Սամ. կառավարութիւնը պարտա-
ւոր է իր սպառազինութիւննե-
րը ամբողջացնել . և սակայն
պատրաստ է զեպանաժողովին
մասնակցիլ առանց ծրագրին
կանխապէս ծանօթանալու :

Դուռը իր գլխաւոր դեպպան-
ներուն շրջաբերական մը զրկել
է սա իմաստով թէ՛ ծովակալները
թուրք զօրագնդերու հետ հա-
մնաշխ գործեն Կրէտէի գոր-
ծը . . . լմնցնելու :

— Անգլիացի ծովակալին ինդ-
րանքին վրայ ֆրանսական, ի-
տալական և ուսական զօրքերը
Քանտալէն հեռացեր են, որով-
հետեւ Անգլիա բաւական զօրա-
ւոր է այնտեղ, անգլօ-թուրքական
խնդիրը ինքնին կարգադրելու :

ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ
ԿԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Վարժարանը իր երկրորդ ասուոյ
շրջանը կսկսի յառաջիկայ երկու-
շաբթի Սեպտ. 7ին : Իր ուղղութիւնը
անցեալ տարին ծանօթ ըլլալով
պատուարժան ծնողաց, աւելորդ կը
համարի կրկնել զայն :
Միայն թէ այս տարի փոխադ-
րուած է նոյն չէքէն հինգ տուն վեր :
Մասնաւոր սեռակցութիւնք կը
կատարուին ամէն առաւօտ եւրօպա-
կան ժամը 9—12 :

Տնօրէնութիւն
Դրդ Ուլաստ Բ. Լինիա Ն. 40
Յ. Գ. Հրապարակին վրայ պատտ
զրոյցները անտեղի են :

ՎԱՐՈ
ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՑԵՂԱՓՈՒԿԱՆ ԿԵԱՆԳԻՑ)
—(—)
(Գին 1 Ֆրանք)

Մնացած սակաւթիւ օրինակները
կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի
խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անտօն
կոչի մօտ, Ռուսուք Հայկ Մարտի-
եանի սրճարանը, Սօֆիա Տ. Մուշեղ
Արժրոնիի քով :
Մտեալ մամուլին կը յանձնուի
նոյն հեղինակին «Բոնութեան դո-
հերը» :

ՄԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէք վաճառուան լաւ պաշտօն-
եայ մը . գիմեցէք Շարժումի խմբ-
ագրութեան, որ ցոյց կուտայ հայ
երիտասարդ մը որ ինք տարիէ իվեր
կառավարական պաշտօն կը վարէ և
տոմարակալութեան ճիւղին համար
վառնայի առեւտրական գրասենակին
վկայուած է :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐժՈՒՄ»

—(—)
Կը սպազրուին ամէն լեզուէ
այցետոմս, հասցետոմս, նամա-
կագլուխ, հարսանեկան հրաւի-
րագիր, մահադդ, ինչպէս նաև
պրօշիւռներ :
Գիններն յոյժ դիւրամատչելի
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգու-
թեամբ և փութով կը կատար-
ուին :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնաի մէջ կը վաճառուի Մու-
սալա, թանկիկ կեղիպէօյեքանի
խանութը, և Ապոլիւրբահման միլի-
թին դէմը հայկական գրատունը :
Ս. Չարպահնէկեանի քով :